ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մարտի 2023 թվականի №---Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի ի №161-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №522-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ ԷՀՑ կանոններ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) ԷՀՑ կանոնների 2-րդ՝

ա. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-ին, 30.1-ին, 43.1-ին, 52.1-ին և 54.2-րդ ենթակետերով.

«25.1) ԷՄԱ կանոններ՝ Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններ.»,

«30.1) ԿԷԱ կայան՝ ԷՄՇ կանոնների համաձայն սակագնային կարգավորման ենթակա Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի, ՎԷԱ կայանի, ՀԷԱ կայանի և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի.»,

«43.1) ՀԷԱ կայան՝ հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող Արտադրող.»,

«52.1) ՊԷԱ կայան՝ պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակում գործող Արտադրող, բացառությամբ ՀԷԱ կայանի.»,

«54.2) ՎԷԱ կայան՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի.»,

բ. կետի 51-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«51) Որակավորված սպառող՝ սեփական դիմումի հիման վրա ԷՄՇ կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով Շուկայի օպերատորի կողմից որակավորված ճանաչված սպառող (ենթասպառող)՝ ԷՄՇ կանոններով, ԷՄԱ կանոններով և ԷՀՑ կանոններով սահմանված առանձնահատկություններով.».

2) ԷՀՑ կանոնների 85-րդ կետում «ԿԷԱ և ՊԷԱ կայանների» բառերը փոխարինել «ԿԷԱ կայանների, ՊԷԱ կայանների և ՀԷԱ կայանների» բառերով.

3) ԷՀՑ կանոնների 20-րդ գլխի վերնագրում, 123-րդ և 124-րդ կետերում «ՊԷԱ» բառը փոխարինել «ՊԷԱ կայանների և ՀԷԱ» բառերով.

4) ԷՀՑ կանոնների 122-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«122. Համակարգի օպերատորը օպերատիվ կառավարման ընթացքում ՀԷԱ կայանների, իսկ Պետություն-Մասնավոր գործընկերության պայմանագրերում հզորության վճարի սահմանում նախատեսված լինելու դեպքում՝ ՊԷԱ կայանների ագրեգատների աշխատունակությունը պարզելու նպատակով իրականացնում է պատրաստականության ստուգումներ:».

5) ԷՀՑ կանոնների 125-րդ կետում «հզորությունը» բառից հետո լրացնել «, իսկ որպես ՀԷԱ կայանների ագրեգատների պատրաստ էլեկտրական հզորություն՝ Հանձնաժողովի հաստատած պայմանագրային հզորությունը» բառերը.

6) ԷՀՑ կանոնների 126-128-րդ կետերում «ՊԷԱ կայանի» բառերը փոխարինել «ՊԷԱ կայանի կամ ՀԷԱ կայանի» բառերով.

7) ԷՀՑ կանոնների 129-րդ կետում «ՊԷԱ կայանն» բառերը փոխարինել «ՊԷԱ կայանը կամ ՀԷԱ կայանն» բառերով, իսկ 130-րդ կետում «ՊԷԱ կայանին» բառերը՝ «ՊԷԱ կայանին կամ ՀԷԱ կայանին» բառերով.

8) ԷՀՑ կանոնների 152.1-ին կետից հանել «իրավունք ունի» բառերը, իսկ «տալ» բառը փոխարինել «տալիս է» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մարտի 2023թ.